ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014-02. 04/157
02.04.2014 թ.

ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական
հիմնարկի պետ՝ Ա. Մխոյանին

Հարգելի պարոն Մխոյան,

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե

2014թ. հունվարից մինչ օրս «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար քանի դատապարտյալի նկատմամբ է կիրառվել.

1) նկատողություն, որպես տույժի նշանակում (խնդրում եմ տրամադրել, թե ինչ արարք կատարելու համար է կիրառվել նկատողությունը):

2) Պատժախուց, որպես տույժի նշանակում (խնդրում եմ տրամադրել, թե ինչ արարք կատարելու համար է կիրառվել պատժախուցը):

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am